ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 դեկտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԴ տարի

181
(3031)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

6 ՕՐ ՈՒՆԵԻՆ, ԲԱՅՑ ԳԵՐԹԱՆԿԱՐԺԵՔ ԱՎԻԱՏՈՄՍ ԷԻՆ ԳՆԵԼ ԱՎԻՆՅԱՆԻ ՀԱՄԱՐ

1



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երեւան, Սարյանի 1

№ 4439-Ա « 15 » Նոյեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԱՄՍՈՒԿԱՅԻ ՄԻԱՑԱԼ ՆԱԽԱՐԱՆՈՒՄ ԼՈՒ ԱՆՁԵԼԵՍ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոս Անջելեսի քաղաքապետ Քերրի Բասսի հետ հանդիպման ու երկկողմ համագործակցության հարցերի քննարկման նպատակով և ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով,

1. Երեւանի քաղաքապետարանի պաշտոնական պատվիրակությանը 2024թ. նոյեմբերի 23-ից 30-ը ներառյալ գործուղել ԱՄՆ Լոս Անջելես քաղաք՝ հետևյալ կազմով.

Տիգրան Ավինյան	Երեւանի քաղաքապետ
Լուսինե Դալալ	Երեւանի քաղաքապետի խորհրդական
Պետրոս Պետրոսյան	Կենտրոն վարչական շրջանի ղեկավար
Դավիթ Գևորգյան	Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Անդրանիկ Թեւոսյան	Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժ/պ
Սարգիս Սանտալան	«Երեւան քաղաքի կառավարման տեխնոլոգիաներ» ՓԲԸ-ի տնօրեն
Օֆելյա Սիմոնյան	Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության պետի տեղակալ
Լուսինե Ղարիբյան	Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետի ժ/պ
Մալվինա Պողոսյան	Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության սոցիալական մեդիա համակարգող
Արամ Դարիկյան	Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության օպերատոր

2. Ընդունել ի գիտություն, որ պատվիրակության անդամների գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են 2024 թվականի Երեւան քաղաքի բյուջեի

2

Արձանագրություն
«ԵՔ-ԷԱՇՁԳԲ-24/293» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի հիման վրա

ք. Երեւան 21.11.2024թ.

Մասնակցում էին՝
Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Դ. Գևորգյան
Գնումների համակարգող՝ Ի. Եղիազարյան

1. Ընդունել ի գիտություն, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի թիվ 623-Ն որոշման 12-րդ կետի հիման վրա՝ հայտ ներկայացնելու առաջարկ էր ներկայացվել «Լաքերի փոյտ» ՍՊԸ-ին:
2. Գնման ընթացակարգի հետագա մասնակցի՝ «Լաքերի փոյտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Երեւան /Հոռոմ- Լոս Անջելես -Երեւան ուղղությամբ՝ 8 ավիատոմս էկոնոմ դասի և 1 ավիատոմս բիզնես դասի

Q/C	Մատակարարի անվանումը	Նախահաշվային արժեքը	Առաջարկած գինը		
			Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
1	«Լաքերի փոյտ» ՍՊԸ	12465000	12465000	—	12465000

3. Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Դ. Գևորգյան
Հանձնաժողով՝ Ի. Եղիազարյան

3

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
15.11.2024
1311-Ա 12.11.2024թ.«ԵՔ-ԷԱՇՁԳԲ-25/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
19.11.2024
1327-Ա 18.11.2024թ.«ԵՔ-ԳՀՇՁԳԲ-25/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆԵՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
15.11.2024
1309-Ա 12.11.2024թ.«ԵՔ-ԷԱՇՁԳԲ-24/347» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
19.11.2024
1325-Ա 15.11.2024թ.«ԵՔ-ԷԱՇՁԳԲ-25/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
15.11.2024
1310-Ա 12.11.2024թ.«ԵՔ-ԳՀՇՁԳԲ-25/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆԵՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
19.11.2024
1326-Ա 18.11.2024թ.«ԵՔ-ԷԱՇՁԳԲ-25/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
15.11.2024
1308-Ա 12.11.2024թ.«ԵՔ-ԳՀԱՇՁԳԲ-25/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆԵՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
19.11.2024
1324-Ա 15.11.2024թ.«ԵՔ-ԳՀՇՁԳԲ-25/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆԵՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ունենալով առնվազն վեց օր՝ ինչո՞ւ է քաղաքապետի ավիատոմսը գնվել «մեկ անձից» ընթացակարգով՝ առանց մրցույթի:

Պետական գնումների օրենքի՝ «մեկ անձ» ընթացակարգի տրամաբանությունը հետեւյալն է, օրինակ.

• եղել է ջրհեղեղ, եւ նավակներ ձեռք բերելու համար չկա մրցույթ անցկացնելու բավարար ժամանակ, հետեւաբար գնումը իրականացվում է հրատապ՝ «մեկ անձ»-ից:

• Շուկայում չկա նման ապրանք, այլ կազմակերպություն (օրինակ գազ, ջուր, այլ), հետեւաբար գնումը իրականացվում է «մեկ անձ»-ից:

Սակայն Ավինյանի՝ ԱՄՆ մեկնելը ամենեւին արտակարգ իրավիճակ չէր, այլ նախապես պլանավորված գործողություն. անգամ 7 մլն դրամից ավելի ավիատոմսի համար վճարելու ճոխությունը եղել է նախապես պլանավորված:

Տիգրան Ավինյանի՝ Լոս Անջելեսի գերթանկարժեք ավիատոմսը կարող էին ձեռք բերել շուկայի մի քանի տասնյակ ավիատոմսեր վաճառող կազմակերպություններից. ավելին՝ դրա համար կար առնվազն վեց օր, բաց չեն արել: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ Ավինյանի՝ ԱՄՆ մեկնելու որոշման՝ 15.11.2024 եւ ավիատոմսի ձեռքբերման՝ 21.11.2024 միջակայքում (լուսանկար 1, 2) 6 օր Ավինյանը ոչինչ չի արել, եւ քաղաքապետարանը, խախտելով մրցակցային սկզբունքը, թանկարժեք տոմս է գնել քաղաքապետի համար:

Եվ ինչ էլ որ բացատրի Ավինյանը, անհնար է, որ տրամաբանական հնչի:

Ինչո՞ւ, որովհետեւ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ս/թ նոյեմբերի 15-ից մինչեւ նոյեմբերի 21-ը քաղաքապետ Ավինյանը արձակել է գնումների հանձնաժողովներ ձեւավորելու տասնյակ կարգադրություններ, սակայն, չգիտես ինչու, Լոս Անջելեսինը չկա (լուսանկար 3):

Իսկ մինչ քաղաքապետ դառնալը նա երբեք բիզնես կլասով ԱՄՆ չի մեկնել. անգամ հայտնի բանավեճի օրը ասաց այդ մասին:

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի 14.01.2025-ին:



Գրիգոր Մինասյանի հեռանալուց հետո արդարադատության նախարարի թեկնածու դարձած Արուսյակ Ջուլհակյանը, ում ՔՊ-ն մերժեց որպես նախարարի թեկնածուի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար ձեւավորվող մրցութային խորհրդի անդամ է նշանակվել: Ստացվում է, որ Ջուլհակյանը փայլուն կենսագրական տվյալներ չուներ, որպեսզի կարողանար հասնել նախարարի աթոռին, դրա համար իր թիմը մերժեց Ջուլհակյանի՝ նախարար դառնալու հեռանկարը, սակայն իրավաբանական ֆակուլտետում սովորելու մասին մեկ տողը նրան բերեց ՀՀ ամենաանկախ մամինը ձեւավորելու հանձնաժողով: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ ունեցվածք է հայտարարագրել Արուսյակ Ջուլհակյանը: Նա ո՛չ անշարժ գույք, ո՛չ շարժական գույք չի հայտարարագրել: Համաձայն 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի՝ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 5 մլն 292 հազար դրամ եւ 856 դոլար, որը նախորդ տարվա համեմատ նվազել է գրեթե 2 մլն դրամով: 2022 թվականին հայտարարագրված կանխիկ 9 հազար դոլարը 2023 թվականին նվազել է 2 հազար դոլարով՝ դառնալով 7 հազար դոլար: Արուսյակ Ջուլհակյանի՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 21 մլն 546 հազար դրամ, ինչը նախորդ՝ 2022 թվականի համեմատ աճել է գրեթե 11 մլն դրամով: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը փոխել է խորհրդարանում իր՝ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը՝ այնտեղից գնալով ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով: ՔՊ-ում սա հերթական անգամ խոսակցությունների նոր առիթ է տվել, թե իրականում ինչու է Հասմիկ Հակոբյանը փոխել հանձնաժողովը: «Ժողովուրդ» օրաթերթին ՔՊ-ականներից մի քանիսը պատմեցին, որ խմբակցության ղեկավարության ու ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մոտ ՔՊ-ականները հարց են բարձրացրել՝ ինչպես է ստացվում, որ իրենց գործուղումների հերթ չի հասնում, բայց կան արտոնյալներ, որոնք աչք չեն բացում գործուղումներից, իսկ այդ արտոնյալներից մեկն էլ, ՔՊ-ականները պնդել են, որ հենց Հասմիկ Հակոբյանն է: Պատճառն այն է, որ Հասմիկ Հակոբյանը, երբեմն չարաշահելով իր եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մտերմությունը, օգտագործելով նաեւ ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանի հետ հարաբերությունները, առաջինն է տեղեկանում ԱԺ ուղարկվող հրավերների մասին, հետո որոշում՝ որ ձեւաչափին է ցանկանում մասնակցել, եւ ինչպես որոշում է, այդպես էլ լինում է: Դրա համար էլ նա է ամենահաճախը գործուղումների մեկնում, ինչը ակնհայտորեն խանդի տեսարաններ է սարքել ՔՊ խմբակցությունում, որտեղից էլ բողոքները հասել են «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն: Հասմիկ Հակոբյանն էլ իր մտերիմների շրջապատում անկեղծացել է՝ որպեսզի թիմում խոսակցությունները հանդարտվեն, եւ լեգալ բացատրություն լինի, պետք է փոխել հանձնաժողովը: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

Առեղծվածային պայմաններում Հայաստանում հայտնված 1 տոննա կոկաինի գործով իրավապահները շարունակում են հարցումները տարբեր երկրներից: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ ՀՀ իրավապահները իրավական աջակցության համար դիմում են ուղարկել նաեւ ԱՄՆ: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ քրեական գործով կալանավորվածների տնային կալանքի ժամկետը լրացել է, եւ աղմկահարույց գործով բոլոր կալանավորվածները ազատ էին արձակվել: Ավելին՝ լրացել էր նաեւ բացահայտման մեկ տարին, բայց նախաքննությունը շարունակվում է: Գրել էինք, որ դեռեւս մեկ տարի առաջ ԱԱԾ-ի կողմից մի շարք եվրոպական երկրներ նամակներ էին ուղարկվել քննության շրջանակում կոկաինի ծագման, շրջանառության եւ այլ հարցերի վերաբերյալ, սակայն այդպես էլ պատասխանները չեն ստացվել կամ ցանկալի պատասխանները չկան: Նշենք, որ այս գործով կալանավորվածները ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանին պատկանող ընկերության աշխատակիցներն էին, որոնցից մեկը կին է:

ԶՐՈՒՅՑ

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ է», ԴԵՄՈՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նախկին ղեկավար Հայկ Դեմոյանը հայտարարել է, որ դեռ 2024 թվականին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից 19 գիրք էր անհետացել:

Դեպքի առթիվ հարցաքննվել են նաեւ այդ տարի թանգարանի ասպիրանտ-գիտաշխատող հանդիսացած երկու անձ՝ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը եւ պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը, սակայն գործն ավելի ուշ կարճվել է:

Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցը՝ մասամբ.

-Պարոն Դեմոյան, սկսենք Նիկոլ Փաշինյանի հերթական գրառումից: Փաշինյանը նշել է, որ 1994 թվականից սկսած բանակցությունները մշտապես տարվել են Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ճանաչելու շուրջ, իսկ մյուս բոլոր թեմաներով քննարկումները զուտ ներքաղաքական հարցեր լուծելու նպատակ են ունեցել: Ինչպե՞ս եք մեկնաբանում նրա հայտարարությունը. եթե նման հայտարարություն է անում, ապա այդ դեպքում ինչու էր Ստեփանակերտում հայտարարում. «Արցախը Հայաստան է եւ վերջ» եւ ինչի՞ շուրջ էր բանակցում, ինչպես ինքն էր ասում՝ զրոյական կետից:

-Մենք ստիպված ենք լինելու հաշվի առնել, թե ինչ պաշտոն է զբաղեցնում տվալ անձը: Նման հայտարարությունից հետո իրենով պիտի զբաղվեին երկու կամ երեք մարմիններ՝ ըստ ճաշակի: Դրանք են ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ Դատախազությունը եւ ոստիկանությունը: Նման կարգի հայտարարությունը, ինքնախոստովանությունից բացի, հայտարարություն է նաեւ հանցագործության մասին. հետադարձ ճանապարհով նայենք, թե որպես լրագրող ինչ է գրել դեռ իր հոդվածներում, Արցախում գտնվելու ընթացքում ինչ է ասել եւ այլն: Եթե հանձնվելու էր, ապա ինչո՞ւ էիր գնացել նախագահական ընտրությունների, շնորհավորանքներ էիր ինչեցնում եւ մերկապարանոց հայտարարություններ անում: Այստեղ մի քանի դրվագով հանցագործություն կարելի է արձանագրել եւ հանձնարարության դեպքում քննիչները կարող են մի քանի մաքուր թղթեր լրացնել:

-Ինքն այդ քայլը բացատրում է հետեւյալ կերպ. «Իմ սխալն այն է եղել, որ հանրությանը չեմ խոստովանել այդ ամենը»:

-Գիտեք դա արդեն լրագրողական խմբագրական ճարպկություն է: Իր նման խմբագիրները, եւ դրա մասին փաստեր շատ կան, գումար էին ժամանակին վերցնում ինչ-որ մեկի դեմ «գրելու» եւ ինչ-որ մեկի դեմ «չգրելու» համար: Եթե փորձեք այդ տեսանկյունից նայել կտեսնեք, որ նույն տրամաչափի հարցեր են: Եթե նա ուներ այդքան լայն աշակցություն՝ համաշխարհային պատմության մեջ չգրված մաշտաբի խաբեության արդյունքում իշխանության գալու, ապա դրանից հետո ուներ հնարավորություն այդ մասին խոսելու:

Այդ գրառման բանաճեւը մեկն է. Նիկոլ Փաշինյանին եւ իր թիմին վաղօրոք նախապատրաստել են հենց այդ հանձնման գործընթացը իրականացնելու համար: Նման օպերացիա է իրականացվել հայկական «գաղտնի պետության» կողմից. դա Սահմանադրությունից անդին ուժի եւ որոշման մասին է, որը կազմված է լինում հասարակական գործիչներից, նախկին պաշտոնյաներից, լրագրողներից, գիտության ներկայացուցիչներից, բիզնեսմեններից՝ տարբեր մասնագիտության տեր մարդկանցից: «Գաղտնի պետություն» ամեն տեղ կա, պարզապես կայացած պետությունների դեպքում դրանք կայացած մարդկանցից կազմված հանրույթ են, իսկ Հայաստանի դեպքում Նիկոլ Փաշինյանը չկայացած պետության խորհրդանիշ է, ում իշխանության բերելը պետության վերջնական մահախոսականն էր:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԾԱՂՐ է ՄԵՐ ԿՈՂՄԻՑ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԸ

Բացահայտ ծաղր է խաղաղության քարոզն այն պայմաններում, երբ Ադրբեջանի նախագահը հայտարարում է, որ 300,000 ադրբեջանցի արդեն դիմել է Հայաստանի վարչապետին՝ «Հայրենիք վերադառնալու» նպատակով:

Ֆեյսբուքյան իր էջում գրել է ՀՀ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը. «ՔՊ վերնախավը «խաղաղության» քարոզը դարձրել է գործիք իշխանության մնալու, պաշտոնները պահպանելու համար՝ մեր պետության հիմքերն ու ժողովրդի դիմադրողականությունը քայքայելու հաշվին:

Բացահայտ ծաղր է խաղաղության քարոզն այն պայմաններում, երբ Ադրբեջանի նախագահը հայտարարում է, որ 300,000 ադրբեջանցի արդեն դիմել է Հայաստանի վարչապետին՝ «Հայրենիք վերադառնալու» նպատակով:

Գոյություն չունեցող հարցը զրոյից դարձել է օրակարգի մաս.«Արեւմտյան Ադրբեջանի» կեղծ հայեցակարգով Ադրբեջանը պահանջում է 300,000 ադրբեջանցու «անվտանգության երաշխավորում», այդ թվում՝ Հայաստանի ինքնիշխան տարածքում երրորդ երկրի զինված ուժերի տեղակայումով:

Ակնհայտ է, որ սա հումանիտար շղարշի ներքո Հայաստանի զավթման ծրագիր է, որ նաեւ բերելու է Հայաստանի ժողովրդագրական վիճակի կործանարար փոփոխության: Ակնհայտ է նաեւ, որ այդ անձանց թվում Ադրբեջանի իշխանությունը նախատեսել է իր այն հատուկ ծառայությունների գործակալների, հայատյացների բնակեցում, որոնք ապահովեցին Արցախի շրջափակումը՝ «էկոակտիվիստ» ձեւանալով: Ընդ որում, ոչ միայն չի խոսում խաղաղությունից, այլ միայն խորացնում է թշնամանքը:

Այս պայմաններում ՀՀ կառավարության ղեկավարն ու նրա հետեւից այլ բարձրաստիճան պաշտոնյաներ խոսում են Ադրբեջանի դեմ միջպետական միջազգային գանգատներից հրաժարվելու մասին՝ կոպիտ ոտնահարելով մեր երկրի ու ժողովրդի ազգային շահերը: Դա նշանակելու է Ադրբեջանի իշխանությանը նվիրել հնարավորություն մաքրվելու մեր ժողովրդի նկատմամբ իր գործած հանցանքներից ու պարարտ հող ստեղծելու հետագա հանցանքների համար:

Հայաստանի անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը չեն կարող զոհաբերվել կեղծ խաղաղության պատրանքի համար՝ հանուն նրա, որ ՔՊ վերնախավը մնա իշխանության ու պաշտոններից չզրկվի:

Խաղաղությունը բացարձակ արժեք է, բայց կայուն խաղաղություն հնարավոր է միայն երկիրն ուժեղացնելու, մեր ազգային շահերն ու իրավունքները, արժանապատվությունն ապահովելու, դիվանագիտական եւ միջազգային մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու միջոցով»:

ԿԴԱԴԱՐԵՑՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արեգ Գեւորգյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Այս մասին ավագանու նիստի ժամանակ հայտարարեց քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

«ԿԸՀ-ի դեկտեմբերի 11-ի որոշմամբ՝ ավագանու անդամի մանդատը փոխանցվել է ՔՊ կուսակցության ցուցակում ընդգրկված հաջորդ անդամին՝ Աշոտ Սարգսյանին»:

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԸ՝ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

ՀՀ ԱԺ խորհուրդը ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի նախագահությամբ դեկտեմբերի 24-ին գումարել է արտահերթ նիստ:

Քննարկման արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար ձեւավորվող մրցութային խորհրդի անդամ է նշանակվել Արուսյակ Ջուլհակյանը: Նրա թեկնածությունն առաջադրել էր ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը, իսկ ԱԺ «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների կողմից թեկնածուների առաջարկներ չեն եղել:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԸ ԲՈԼՈՐ 4 ԳՈՐԾԵՐՈՎ ՊԱՐՏՎԵԼ է

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը Իշխան Սաղաթելյանի դեմ բոլոր 4 գործերով պարտվել է նաեւ Վերաքննիչ դատարանում: Հայցի առարկան «Դիմադրություն» շարժման հավաքների օրինականությունն էր:

4 գործերով էլ Իշխան Սաղաթելյանի ներկայացուցիչը փաստաբան Վահե Գրիգորյանն էր: Փաստաբանն իր էջում մանրամասնել է, որ 2022թ. տեղի ունեցած «Դիմադրության» շարժման բողոքի ակցիաների եւ շտապ հավաքների անցկացման փաստը հիմք ընդունելով՝ Երեւանի քաղաքապետը 4 հայց է ներկայացրել ընդդեմ Իշխան Սաղաթելյանի՝ պահանջելով որպես կազմակերպիչ նրան տուգանել մինչեւ 300.000 ՀՀ դրամի չափով, ընդհանուր առմամբ՝ մինչեւ 1 մլն 200 հազար ՀՀ դրամի չափով:

Նախորդ տարի Վարչական դատարանը 4 գործերով էլ բավարարարել էր 4 հայցերը մերժելու դիմումը:

«Քիչ առաջ ստացա Վճռաբեկ դատարանի որոշումը, որով մերժվել է Երեւանի քաղաքապետ(արան)ի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը. որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է եւ բողոքարկման ենթակա չէ:

Իմիջիայլոց, Երեւանի քաղաքապետարանը առհասարակ իրավունք չուներ Վճռաբեկ բողոք բերելու. այս գործով բողոքաբեր կարող էր հանդիսանալ բացառապես Երեւանի քաղաքապետը», - նշել է փաստաբանը:

ՆԵԹԱՆՅԱՀՈՒՆ՝ ԳԱԶԱՅԻ ԵՎ ՊԱՏԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուն հայտարարել է, որ Գազայի հատվածում հրադադարի եւ պատանդների փոխանակման բանակցություններում որոշակի առաջընթաց կա:

Ինչպես փոխանցում է «ՌԻԱ Նովոստին», այս մասին Իսրայելի վարչապետը հայտարարել է Կնեսետի (խորհրդարան) նիստում:

Նա ընդգծել է, որ որոշակի առաջընթաց է գրանցվել պատանդների փոխանակման բանակցություններում, սակայն հայտնի չէ, թե դեռ որքան ժամանակ կպահանջվի գործարքը կնքելու համար:

Վերջին շաբաթներին Կահիրեում եւ Դոհայում ինտենսիվացել են Իսրայելի եւ ՀԱՄԱՍ-ի միջեւ բանակցությունները միջնորդների միջոցով, եւ խնդրին ծանոթ աղբյուրները հայտնել են առաջընթացի մասին:

ԻՍՐԱՅԵԼԻՆ ԿՈՉ ԵՆ ԱՐԵԼ ԱՐԱԳԱՑՆԵԼ ԶՈՐՔԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄԸ

Լիբանանում ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերը (UNIFIL) Իսրայելին կոչ են արել արագացնել զորքերի դուրսբերումը Լիբանանի տարածքից:

Այս մասին ասվում է կազմակերպության «Տելեգրամ» ալիքում հրապարակված հաղորդագրության մեջ:

«ՅՈՒՆԻՖԻԼ-ը կոչ է անում արագացնել Իսրայելի պաշտպանության բանակի դուրսբերման գործընթացը եւ Լիբանանի զինված ուժերի տեղակայումը հարավային Լիբանանում: ՅՈՒՆԻՖԻԼ-ը կոչ է անում բոլոր կողմերին ձեռնպահ մնալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1701 բանաձեւը խախտելուց եւ ցանկացած գործողություն, որը կարող է վտանգել ներկայումս տիրող փխրուն կայունությունը: Խաղաղապահները կշարունակեն վերահսկել եւ զեկուցել 1701 բանաձեւի խախտումների մասին եւ կաջակցեն ռազմական գործողությունների դադարեցմանը»,- ասվում է հայտարարության մեջ:

Նոյեմբերի 27-ին ամերիկա-ֆրանսիական նախաձեռնության համաձայն՝ ուժի մեջ է մտել Իսրայելի եւ Լիբանանի միջեւ հրադադարի մասին համաձայնագիրը:

Փաստաթուղթը նախատեսում է լիբանանյան բանակի տեղակայումը հարավային սահմանի երկայնքով՝ Լիբանանում ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերի աջակցությամբ: Իր հերթին հրեական պետությունը պետք է 60 օրվա ընթացքում դուրս բերի իր զորքերը Լիբանանի տարածքից:

ԻՆՉ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԿԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԲԱՆԱՎԵՃԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ

«Լավ է, որ նախկին նախագահները իրենց ներկայացուցիչների միջոցով արձագանքել են ԼՂ բանակցային գործընթացին վերաբերող իմ այսօրվա գրառմանը: Բայց ես ներկայացուցիչների ետեւում չեմ թաքնվում, կարծում եմ՝ ճիշտ կլինի՝ իրենք էլ չթաքնվեն». գրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով բանակցային գործընթացի վերաբերյալ արված իր գրառման վերաբերյալ արձագանքին:

«Պատրաստ եմ նախկին նախագահների հետ ուղիղ եթերում բանավեճի ֆորմատով հիմնավորել ասածներս: Սպասում եմ այսօրվա գրառումս վիճարկող նախագահների արձագանքին: Շնորհակալություն»,- ասված է հաղորդագրության մեջ:

Նիկոլ Փաշինյանի այս հաղորդագրությանը պատասխանել էին Հայաստանի Հանրապետության երեք նախագահները:

«Փաստինֆո»-ն մեկնաբանության համար դիմել է ՀՀ երրորդ նախագահի գրասենյակ՝ խնդրելով հայտնել, թե արդյոք քննարկվո՞ւմ է բանավեճի հրավերը:

«Ակնհայտի մասին բանավիճելն անիմաստ է, մանավանդ, որ ինչպես մինչեւ իշխանազավթումը, այնպես էլ դրանից հետո հազար անգամ հրապարակային, հանգամանորեն ներկայացվել է ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի ամբողջ պատմությունը: Առավել եւս, երբ Հայաստանի կառավարիչն ամեն ինչ արեց բանակցային գործընթացը ձախողելու համար: Եթե նա շատ է ուզում բանավիճել, ապա խորհուրդ ենք տալիս բանավիճել համանախագահ երկրների՝ ՌԴ, ԱՄՆ եւ Ֆրանսիայի նախագահների հետ, ովքեր 2009-2013 թվականներին հինգ անգամ հայտարարել են բանակցային ձեւաչափի եւ այն սկզբունքների մասին, որոնց հիման վրա պետք է լուծվեր ԼՂ հիմնախնդիրը:

Չէր խանգարի, որ մեկ-մեկ էլ լսեր իր «կիրթ ու կառուցողական» գործընկերոջ՝ ինչպես 2016 թվականի, այնպես էլ հետպատերազմյան խոստովանությունները»,- պատասխանել են ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գրասենյակից:

ՀՀ երկրորդ նախագահի գրասենյակի ղեկավար Բագրատ Միկոյանը Նիկոլ Փաշինյանի՝ բանավեճի հրավերին ի պատասխան նշել է. «Նախագահ Քոչարյանը վաղուց չի կարդում վարչապետի ֆեյսբուքյան մարազմատիկ գրառումները: Ես ստիպված եմ ծանոթանալ դրանց՝ աշխատանքիս բերումով, եւ դա եղել է իմ արձագանքը:

Բանավեճի համար վիճելի թեմայի առկայություն է անհրաժեշտ. իսկ այն, որ Արցախի եւ Հայաստանի սուվերեն տարածքների հանձնումը գործող վարչապետի անձնական «վաստակն» է, անվիճելի պատմական փաստ է ու ակնհայտ՝ բոլոր ադեկվատ մարդկանց համար:

2018-2024 թվականներին Հայաստանում մեկ մարդ է ունեցել ամբողջական իշխանություն, եւ այդ մեկ մարդն է կրում բոլոր իրադարձությունների ամբողջական պատասխանատվությունը: Մեկ մարդ է հայտարարել, որ բանակցում է իր սեփական կետից, ինչ որ պետք է՝ այն էլ բանակցում է, եւ այդ մեկ մարդը գործող վարչապետն է: Տիկտոկյան կոմիկ պերսոնաժների հետ ոչ ոք լուրջ թեմաներ, իհարկե, չի քննարկի:

Հազարավոր ոստիկանների եւ թիկնապահների ետեւում թաքնված գոյատեւողի՝ թաքնվելու ակնարկի մասին կցանկանայի լռել, դրա մասին ավելի խոսուն կպատմեն բունկեր-թաքստոցների բազմատանջ պատերը»:

Բանավեճի հրավերին արձագանքել է նաեւ առաջին նախագահ Լեւոն Տեր Պետրոսյանը. «Մեր պետության ու հասարակության համար չափազանց օգտակար կլինի, որ Փաշինյանը բանավիճի Փաշինյանի հետ:

Ընդ որում՝ Նիկոլ Փաշինյան vs Նիկոլ Փաշինյան բանավեճը չափազանց օգտակար կլինի ոչ միայն Ղարաբաղյան հարցի շուրջ, այլեւ հասարակությանը հուզող ցանկացած այլ թեմայով. Ամուլսար, բանկերի մենատիրություն, ԲՈՒՀ-երի կառավարման կուսակցականացում, դեսպանների նշանակման քաղաքականացում, պետական/քաղաքական պաշտոնյաների կողմից իրականացվող հովանավորչություն եւ տարատեսակ տենդերների միջոցով պետական բյուջեի մսխում, պադավատապետություն, դատական համակարգի անկախության ոչնչացում եւ sms-ով դատական բարձրագույն պաշտոնյաների ազատում, քաղաքական հակառակորդների դեմ իրավապահ մարմիններին որպես մահակ գործածում եւ այլն: Արդյունքը կրկին նույնն է լինելու»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊՈՒՏԻՆ–ՓԱՇԻՆՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան առանձին հանդիպման ծրագրեր չկան, բայց ԱՊՀ գագաթնաժողովի շրջանակում շփվելու հնարավորություն կա. այս մասին լրագրողներին ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

Դեկտեմբերի 25-ին ՌԴ-ում կկայանա ԱՊՀ ղեկավարների ավանդական տարեվերջյան հանդիպումը, իսկ դեկտեմբերի 26-ին տեղի կունենա Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստը, որը վարելու է Փաշինյանը:

Նիստը կկայանա ՌԴ Լենինգրադի մարզի «Իգորա» լեռնադահուկային հանգստավայրում:

Այս տարի Հայաստանը նախագահում է Եվրասիական տնտեսական միությունում (ԵԱՏՄ): Միջոցառմանը կմասնակցեն նաեւ Ղազախստանի, Բելառուսի եւ Ղրղզստանի, ինչպես նաեւ դիտորդ երկրների՝ Ուզբեկստանի եւ Կուբայի ղեկավարները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՃԱՆԱՉՈՒՄ Է ԿՈՍՈՎՈՅԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ

Հայաստանը եւ Կոսովոն համաձայնություն են ձեռք բերել փոխադարձաբար նախատեսել միմյանց կողմից տրամադրվող անձնագրերով մուտքի վիզայի համար դիմելու հնարավորություն:

Մեկնաբանելով Կոսովոյի անձնագրերը ըստ էության ճանաչելու այս որոշումը՝ արտգործնախարարության մամուլի խոսնակ Անի Բադալյանը հայտնել է՝ նպատակը մարդկանց ազատ տեղաշարժի հիմնարար սկզբունքը ապահովելն է:

Հաշվի առնելով, որ Հայաստանը չի ճանաչել Կոսովոյի անկախությունը, Անի Բադալյանը խոսել է նաեւ, թե գործակցության ու հարաբերությունների ամրապնդման ինչ փուլում են Հայաստանն ու Կոսովոն, հնարավոր է արդյոք այդ երկրի անկախության ճանաչում: Արտաքին գործերի նախարարի մամուլի խոսնակը մասնավորապես պարզաբանել է. «Ինչ վերաբերում է երկկողմ փոխգործակցության բնույթին, ապա, ինչպես տեղյակ եք, Հայաստանի եւ Կոսովոյի միջեւ առկա երկխոսությունը պահպանվում է տարբեր հարթակներում, մակարդակներով: Երկկողմ հանդիպումների, քննարկումների միջոցով քայլեր են ձեռնարկվում զբոսաշրջային կապերը եւ մարդկանց միջեւ շփումներն աշխուժացնելու ուղղությամբ, ինչը չի նշանակում ճանաչում: Նկատենք, որ այս առումով Հայաստանի Հանրապետությունն ամենեւին բացառություն չէ. աշխարհի բազմաթիվ երկրներ, այդ թվում եւ մի շարք Եվրամիության անդամ պետություններ, ճանաչում են Կոսովոյի անձնագրերը եւ ոլորտային համագործակցություն ունեն Կոսովոյի հետ՝ առանց ճանաչման»,- ասել է Անի Բադալյանը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՎ

ԳՐԵԹԵ 9 ԺԱՄ ԱՌԵՐԵՍ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Փաստաբան Էրիկ Ալեքսանյանը ArmLur.am-ին հայտնեց, որ Սերոբ Գասպարյանի գործով երեկ տեղի ունեցան վարույթով անցնող առանցքային վկաների հետ առերեսումներ:

Գրեթե 9 ժամ տեւած արերես հարցաքննությունների արդյունքում Սերոբ Գասպարյանի մեղադրանքը ամբողջությամբ սնանկացավ: Վկաներին տրվել են հարցեր, որոնց պատասխանները էական նշանակություն են ունենալու սույն գործի լուծման համար: Ընդ որում՝ «անհասկանալի է» թե ինչու այդ վկաները ժամանակին իրենց ցուցմունքներում չեն հայտնել այդ տեղեկատվությունը, քանզի եթե ի սկզբանե հայտնեին, պաշտպանության կողմը վստահ է, որ Սերոբ Գասպարյանին նույնիսկ մեղադրանք առաջադրելը կլիներ խնդրահարույց:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության կողմից տեղեկություններ են ստացվել՝ մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ, իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու մասին:

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հարցաքննությունների արդյունքում՝ բավարար փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ քաղաքացիներ Ս.Գ.-ն, որը ԱԺ նախկին պատգամավորի եղբայրն է , Ա.Ե.-ն, Ա.Հ-ն, Ե.Ս.-ն, Ա.Ս.-ն, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի նախկին բնակիչներ Ա.Մ.-ն Ա.Ս.-ն, ինքնությունները դեռեւս չպարզաբանված այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, կատարել են իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն, այն է՝ դիտավորությամբ ստեղծել են Հայաստանի Հանրապետության իշխանությունը զավթելու՝ բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով ՀՀ կառավարության լիազորություններին տիրանալու պայմաններ:

Մասնավորապես, նշված անձինք, նախնական համաձայնությամբ, ՀՀ իշխանությունը զավթելու նպատակով վարձատրության՝ յուրաքանչյուրին ամսական շուրջ 220.000 ՌԴ ռուբլի վճարի դիմաց, Ռուսաստանի Դաշնությունում եռամսյա հավաքներ անցնելու եւ դրա ընթացքում նոր ծանր զինատեսակներին ծանոթանալու, դրանց կիրառման հմտություններն ուսանելու, ապա ՀՀ վերադառնալուց հետո մարտական հերթապահություն իրականացնելու, ինչպես նաեւ գիտելիքները այլ անձանց փոխանցելու պատրվակով 2024 թվականի ընթացքում հավաքագրել են ՀՀ մի շարք քաղաքացիների եւ Լեռնային Ղարաբաղի մի շարք նախկին բնակիչների:

Բացի այդ, նրանց հայտնել են, որ վարժանքների նպատակը Հայաստանի Հանրապետություն վերադառնալն ու գործող իշխանությանը հեռացնելն է՝ հնչեցնելով այդ կերպ Հայաստանի Հանրապետությունը «մաքրելու» եւ «փրկելու» կոչեր:

Նշված արարքը կատարելու համար քրեական հետապնդում է հարուցվել 7 անձի նկատմամբ: Նրանցից 3-ը կալանավորված են, իսկ 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պետական վերահսկողական ծառայությունը վերահսկողություն է իրականացրել 50 տոկոս եւ ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում՝ շահութաբաժինների հաշվետվությունների հաշվարկներում արտացոլված ֆինանսական տվյալների ճշտության նկատմամբ. հայտնաբերվել են մի շարք խախտումներ եւ անճշտություններ:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի՝ բաժնետերերն իրավունք ունեն Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից ստանալ շահութաբաժին, որի չափը սահմանվում է Ընկերության կանոնադրությամբ:

ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194-Ն եւ 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումներով սահմանվում է պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների՝ ՀՀ պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը կառավարող մարմինների աշխատանքը եւ ընկերությունների կողմից իրականացվող որոշ ծախսերի առավելագույն թույլատրելի սահմանաչափերը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից վերահսկողություն է իրականացվել 50 տոկոս եւ ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում՝ շահութաբաժինների հաշվետվությունների ճշտության մասով: Ծառայությունը, մասնավորապես, վերահսկողության համար առանձնացրել է այն Փակ բաժնետիրական ընկերություններին, որոնք հաշվետու ժամանակաշրջանում Պետական եկամուտների կոմիտեի կողմից անցել են համալիր հարկային ստուգումներ:

Մշտադիտարկվել են թվով 20 Փակ բաժնետիրական ընկերություններ, որոնցից 14-ում արձանագրվել է, որ Ընկերությունները նախորդ տարիների գործունեության մասով պակաս ներկայացված հասույթի կամ ավել ծախսագրված գումարների չափով ֆինանսական տվյալների փոփոխությունների արդյունքում շուրջ 421 մլն ՀՀ դրամ լրացուցիչ շահութաբաժնի գումարներ չեն հաշվարկել, ապա եւ չեն վճարել ՀՀ պետական բյուջե:

Ծառայության կողմից իրականացված վերահսկողության արդյունքում թվով 4 ընկերություններ ՀՀ պետական բյուջե են վերականգնել շուրջ 59 մլն ՀՀ դրամ: Բացի այդ, Ծառայության միջնորդությամբ եւս 1 ընկերության կողմից տարեկան գործունեության արդյունքում հաշվարկված շահութաբաժնի վնասը պակասեցվել է շուրջ 300 մլն դրամով, իսկ 2 այլ ընկերություններում մեկնարկել է ընդհանուր շուրջ 100 մլն դրամի շահութաբաժնի վնասի նվազեցման հաշվապահական հաշվառման գործընթաց: Ինչպես նաեւ Ծառայության կողմից 2 այլ ընկերություններում արձանագրվել են գործունեության արդյունքում հաշվարկված շուրջ 170 մլն դրամի հարկային վնասի՝ առանց հիմքերի պակասեցման դեպքեր:

Պետական վերահսկողական ծառայությունը խախտումներ է հայտնաբերել 50 տոկոս եւ ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առողջապահական եւ էներգետիկ ոլորտներում գործունեություն ծավալող Փակ բաժնետիրական ընկերություններում:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը միաժամանակ ուսումնասիրել է այդ Ընկերությունների կողմից թույլ տրված խախտումների պատճառները, որի արդյունքում պարզվել է, որ մի շարք Ընկերությունների կողմից թույլ են տրվել առերեւույթ խախտումներ՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի թերի իմացության եւ սահմանված ընթացակարգերի չպահպանման պատճառով, իսկ որոշները՝ լուծարման հնարավոր գործընթացի թիրախում չհայտնվելու միտումով, ինչն ուղեկցվել է փաստացի վնասով իրականացված գործունեության արդյունքները քողարկելու մտայնությամբ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՂԲԱՅՐԸ ԿՏՐՈՂ-ԾԱԿՈՂ ԱՌԱՐԿԱՅՈՎ ՀԱՐՎԱԾԵԼ Է ԵՂԲՈՐԸ

Դեկտեմբերի 22-ին՝ ժամը 19:15-ին, ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն «Գյումրի» բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել, որ «Որովայնի առաջնային պատի վերք, թափանցում հարցականով» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխվել Գյումրու բնակիչ 34-ամյա երիտասարդ: Ըստ բժշկի տեղեկանքի՝ նա ի վիճակի չէ բացատրություն տալու: Այս մասին հայտնում են ՆԳՆ-ից:

Քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչության ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ժամը 18:00-ի սահմաններում տանն անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ 34-ամյա երիտասարդին սուր կտրող-ծակող առարկայով հարվածել է 28-ամյա եղբայրը:

Նա ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Շիրակի մարզային քննչական վարչություն:

«ՍՈՒՐՄԱԼՈՒ»-Ի ՏՆՕՐԵՆԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՔՈՑԸ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ԱՐԳԵԼՔՆ Է

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում 2021 թ. ապրիլի 6-ին տեղի ունեցած հրդեհի եւ 2022թ. օգոստոսի 14-ի պայթյունի դեպքերի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում իրականացվող քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Այդ մասին հայտնում են ՀՀ ՔԿ-ից:

«Նախաքննության ընթացքում կատարված մեծաքանակ քննչական գործողությունների արդյունքում պարզվել է, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնի գործունեությունը կազմակերպող ՓԲԸ-ի տնօրեն Ի.Մ-ն եւ ընկերության առեւտրի կազմակերպման գծով փոխտնօրեն Վ.Մ.-ն, «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ պարտավոր լինելով կատարել հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջները, մշակել եւ իրագործել հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումները, սարքին վիճակում պահել հակահրդեհային համակարգերը եւ միջոցները, չեն կատարել դրանք:

Ի.Մ.-ի եւ Վ.Մ.-ի կողմից թույլ տրված խախտումների հետեւանքով 2021 թվականի ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնի էլեկտրասնուցման համակարգի վթարային ռեժիմի պատճառով առաջացել է հրդեհ:

Ի.Մ.-ի եւ Վ.Մ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է բացակայելու արգելքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 23-ից 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 136 դեպք, որից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ 2 ՔՈԼԵՋՆԵՐԸ ՄԻԱՎՈՐՎԵԼ ԵՆ

2024 թվականի մարտի 28-ի որոշմամբ հուլիսին կայացել է Դիլիջան քաղաքի Ուսանողական 70 հասցեում գործող «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի եւ Դիլիջան քաղաքի Ուսանողական 74 հասցեում գործող «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միավորումը: Միավորված քոլեջը կոչվում է Դիլիջանի պետական բազմագործառնույթային քոլեջ: Կառավարության որոշման մեջ որպես միավորման հիմնավորում նշվել է. «Ելնելով Դիլիջան քաղաքում սովորողների թվաքանակի նվազեցման միտումից եւ ուսումնական հաստատություններին ամրացված տարածքների օպտիմալ օգտագործման պահանջից: Միավորված քոլեջի տնօրեն է նշանակվել Դիլիջանի պետական քոլեջի տնօրեն Վահագն Հովհաննիսյանը»: Վերջինիս հարցնելով՝ իմացանք, որ Դիլիջանի բժշկական քոլեջի նախկին տնօրեն Էմիլ Գեւորգյանը, իր դիմումի համաձայն, ազատվել է աշխատանքից, իսկ նրա հայրը՝Վարդան Գեւորգյանը, բազմագործառնույթային քոլեջի կարիերայի գծով պատասխանատուն է: Վ. Հովհաննիսյանը հայտնեց, որ բազմագործառնույթային քոլեջն այժմ ունի 418 ուսանող, որոնց մոտ կեսը բժշկական գործ է ուսանում: Նա ասաց, որ միավորումից հետո քոլեջի աշխատակիցների կրճատումներ չեն եղել, իրենք աշխատել են բոլորին, թեկուզ կես դրույքով, որոշակի քանակի դասաժամերով ապահովել: Վ. Հովհանիսյանը հայտնեց, որ ուսումնական գործընթացը բնականոն կազմակերպելու նպատակով բժշկական քոլեջում առկա գույքի մի մասը տեղափոխել են Դիլիջանի պետական քոլեջի շենք, ուր տեղի է ունենում ուսումնական գործընթացը : Դիլիջան քաղաքի Երիտասարդական 74 գտնվող բժշկական քոլեջի եռահարկ շենքում այժմ ուսումնական գործընթաց տեղի չի ունենում: Կառավարության վերոհիշյալ որոշմամբ նախատեսվում է վերանորոգման աշխատանքների ավարտից հետո Դիլիջան քաղաքի Ուսանողական 70 հասցեի ուսումնական մասնաշենքը հանձնել պետական գույքի կառավարման կոմիտեին: Այդ շենքը ներկայումս գտնվում է ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող Դիլիջանի բազմագործառնույթային քոլեջի հաշվեկշռում: Զբոսաշրջային Դիլիջանում եռահարկ այդ շենքի հետագա ճակատագիրն անորոշ է: Դիլիջանում բնակելի, հասարակական կառուցապատման հողերի, շինությունների շուկայական գինը Հայաստանի շատ բնակավայրերի համեմատ բարձր է: Հավանական է, որ եռահարկ շենքը շուկայականից էժան գներով կօտարեն ՔՊ-ական իշխանության հետ կապված անձին, ով այդտեղ հյուրանոց, խանութ կամ այլ օբյեկտ կգործարկի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՈՎ Է ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար ձեւավորվող մրցութային խորհրդի անդամ է նշանակվել Արուսյակ Զուլհակյանը, ինչը պատահական չէ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում Արուսյակ Զուլհակյանի հայտնվելը պատահական չէ, քանի որ Զուլհակյանը եւ ներկայումս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը մտերիմ ընկերուհիներ են: Իսկ «Քաղաքացիական պայմանագրի» միակ նպատակը Արուսյակ Զուլհակյանին Հանձնաժողովի նախագահ դարձնելու նպատակներ ունի:

Իսկ Արուսյակ Զուլհակյանին Հանձնաժողովի նախագահի պաշտոնում նշանակելու միակ նպատակը իշխանության կոռուպցիոն գործերը թաքցնելն է, քանի որ վերջերս մեղադրանքները, որ ՔՊ-ականները թաթախված են կոռուպցիայի մեջ, անասելի շատացել են:

Սա եւս մեկ քայլ է սխալ եւ ոչ ճշգրիտ լրացված հայտարարագրերի թաքցման, հովանավորչությունների եւ շահերի բախման կոծկման համար:

Անգլուխ այս կառույցը կարծես այսուհետ կլինի ոչ թե անկախ մարմին, այլ իշխանության կողմից վերահսկվող:

Հարկ է նշել, որ Արուսյակ Զուլհակյանը սովորել եւ ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի սոցիալ-քաղաքական առարկաների եւ ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետը, ապա ՀՊՃՀ նույն ֆակուլտետի մագիստրատուրան: Այժմ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Զուլհակյանը 2010 թվականին ավարտել է Վարշավայի համալսարանի (Լեհաստան) իրավաբանական ֆակուլտետը՝ մարդու իրավունքներ մասնագիտացմամբ:

2015-2018 թվականներին եղել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության իրավաբանական թիմի անդամ: 2015-2018 թվականներին՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի մի շարք ծրագրերի իրավաբան:

Արուսյակ Զուլհակյանը քաղաքական ասպարեզ է եկել 2018 թվականի հեղափոխությունից հետո՝ որպես Երեւանի ավագանու անդամ, այժմ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

Կորել է սեփականության իրավունքով «Վիրաժ» ԱԿ-ին պատկանող, JCB3CX4TP02004074 նույնականացման համարով, JCB 3CX էքսկավատոր ամբարձիչի 1288OS պետական համարանիշը:

Գտնողներին խնդրում եմ կապվել +374 33 00 37 44 հեռախոսահամարով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Պ. Սեւակի փողոց, 3 հասցեում գտնվող 368,9 քմ բնակելի տուն, 255,8 քմ բնակելի տուն, 2,1 քմ զուգարան, 10 քմ շինություն, 4,4 քմ շինություն, 34,6 քմ անասնաշենք, 4,6 քմ մառան (աստիճանի տակ), 50,1 քմ ծածկ, 46,4 քմ ծածկ, 18 քմ ծածկ, 10,7 քմ /19,3 խմ/ պարիսպ, 3,6 քմ /5,8 խմ/ պարիսպ եւ 0,1622 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 55310000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 10.01.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 10.02.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԱՐՎԱ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի հոդվածների եւ դրանցում տեղ գտած բացահայտումների հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հարուցել է 24 վարույթ: Վարույթների շրջանակում պաշտոնատար անձանցից հայցվել են հայտարարագրերի անճշտություններ: Իշխանական թիմի հետ կապված լինելու հանգամանքով պայմանավորված՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կարճել է վարույթները:

Հարուցված վարույթներից 5-ի ուսումնասիրությունները ընթացքում են:

Վերոնշյալ վարույթներից կարելի է առանձնացնել մի քանի ուշագրավ նյութ եւ վարույթ:

● Մայիսի 14-ին հրապարակված ««Օրենքը օրենք չէ», եթե բացառություններ չունի ՔՊ պատգամավորի համար. Թագուհի Ղազարյանի ոչ ստեղծագործական աշխատանքի հետքերով» վերտառությամբ մամուլի հոդվածի համաձայն՝ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյանը, պատգամավորական մանդատին զուգահեռ, զբաղվում է նաեւ նյութերի թվայնացմամբ, խմբագրմամբ, որի համար 2023 թվականին «Գրանիշ» գրական ակումբի կողմից ստացել է այդ տարվա ընթացքում արխիվային նյութերի թվայնացման, խմբագրման ու նորովի մեկնաբանման համար մրցանակ: Կազմակերպությունը՝ գրական ակումբը, որտեղ գործունեություն է ծավալում Թագուհի Ղազարյանը, գործում է ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ:

Հանձնաժողովն ուսումնասիրել է հրապարակման առարկան Ազգային ժողովի պատգամավորներին ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաեւ «Հանրային ծառայության մասին» օրենքով ներկայացվող անհամատեղելիության պահանջների ներքո:

Ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովը գտել է, որ գրական ստեղծագործությունների մեկնաբանումը, «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 14-րդ մասի իմաստով, համարվում է ստեղծագործական աշխատանք: Միաժամանակ, ստեղծագործությունների թվայնացման եւ խմբագրման առնչությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարանների ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված գործունեությունը ստեղծագործական չէ:

● Հունիսի 4-ին «Ժողովուրդ» օրաթերթը եւ ArmLur.am-ը հրատարակել/հրապարակել էին հոդված՝ «44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողովի աշխատանքները տապալած Անդրանիկ Քոչարյանը իշխանության 6 տարում գրեթե կրկնապատկել է կարողությունը» վերնագրով: Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա՝ Հանձնաժողովն իրականացրել է Անդրանիկ Քոչարյանի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն: Ա. Քոչարյանի կողմից ներկայացված հայտարարագրերի առնչությամբ մամուլում տեղ գտած հրապարակումներում արձանագրված առերեւույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ստուգումների արդյունքում հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայությունը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը որոշել է վերջինիս նկատմամբ որեւէ գործընթաց չնախաձեռնել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՄՓՈՓԵԼՈՎ «ՏԱՐՎԱ ԴԱՏԸ»

Գ

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ՝ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՕՐՈՎ

Հայ մամուլի օրվա առթիվ «Ժողովուրդ» օրաթերթը հոկտեմբերի 16-ին հրաշալի նվեր է ստացել՝ հաղթելով դատարանում:

Հիշեցնենք՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը պարտվել էր, քանի որ զրպարտել էր «Ժողովուրդ» օրաթերթին:

Հիմա ամեն ինչի մասին՝ հերթով. 2023 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ ԱԺ ամբիոնից ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը հրապարակավ զրպարտեց մեզ:

Այդ հայտարարությունից հետո «Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիրը Արթուր Հովհաննիսյանից հրապարակավ բացատրություն պահանջեց, եւ, քանի որ չստացանք պատշաճ բացատրություն եւ փաստեր չներկայացվեցին, մտանք դատարան:

Դատարանի միջոցով պահանջել էինք պարտավորեցնել հրապարակայնորեն՝ ԱԺ ամբիոնից, իսկ անհնարինության դեպքում ArmLur.am լրատվական կայքի միջոցով տեսանկարահանմամբ հերքել արված հայտարարությունը եւ նույն ձեւաչափով ներողություն հայցել «Ժողովուրդ» օրաթերթի ամբողջ խմբագրակազմից: Ի հատուցումն հայցվորին պատճառված ոչ նյութական վնասի բռնագանձել նաեւ 4 մլն ՀՀ դրամ, ինչպես նաեւ դատական ծախսերը:

Իհարկե, դատավոր Սարգիս Երիցյանը մասամբ էր բավարարել մեր պահանջները՝ վճռելով, որ Արթուր Հովհաննիսյանը պարտավոր է զրպարտություն համարվող հայտարարությունը հրապարակայնորեն հերքել Ազգային ժողովի ամբիոնից, անհնարինության դեպքում «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊ ընկերությանը պատկանող ArmLur.am էլեկտրոնային կայքով հերքումն իրականացնել՝ վճռի օրինական ուժ ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում:

Հերքել հետեւյալ կերպ՝ «07.12.2023 թվականին ՀՀ ազգային ժողովի նիստի ընթացքում ամբիոնից արված հայտարարությունը («...դե մենք գիտենք՝ հրապարակումները Հայաստանում ոնց են ծնվում, օրինակ՝ ինչ-որ մեկը կարող ա «Ժողովուրդ» օրաթերթին փող տա, վատ հոդված պատվիրի ինչ-որ մեկի մասին, որ պախարակի էդ մարդուն, ինչը նորմալ երեւույթ ա «Ժողովուրդ» օրաթերթի համար....») իրականությանը չի համապատասխանում»:

Դատարանը վճռել էր նաեւ Արթուր Հովհաննիսյանից, հօգուտ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊ ընկերության, բռնագանձել 300 հազար ՀՀ դրամ՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում եւ 29 հազար դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Սակայն մենք բողոքարկելու ենք այս որոշումը, քանի որ Արթուր Հովհաննիսյանը պարտավոր է ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼ ԱԺ ԱՄԲԻՈՆԻՑ եւ փոխհատուցել մեզ հասցված նյութական վնասը, որը գնահատված է 4 մլն ՀՀ դրամ:

Չմոռանանք ասել, որ շնորհակալ ենք «ԷՄ ՋԻ ԷՄ փարթներս» փաստաբանական գրասենյակին՝ ի դեմս ղեկավար Գագիկ Խաչիկյանի՝ մամուլի օրը մեզ համար կարեւոր նվեր մատուցելու համար: Ի գո՛րծ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ՆՅՈՒԹԵՐ. ԱՄՓՈՓՈՒՄ

ՎԱՐՈՒՅԹ ԷՐ ՍԿՍՎԵԼ ՄԵՐ ՀԱՐՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հուլիսի 16-ին «Ժողովուրդ» օրաթերթի, ArmLur.am-ի խմբագրությունն ահազանգ էր ստացել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քաղաքացուց, որ վարչական շրջանում ծորակի ջուրը խմել հնարավոր չէ (https://armlur.am/1385115/): Սակայն խմբագրության զանգերին ի պատասխան՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ից հորդորեցին գրավոր հարցում ուղարկել:

Հրապարակված նյութից հետո տեսչական մարմինը քննություն է սկսել պարզելու համար, թե ինչով է պայմանավորված ջրի նման որակը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԱԴԵՊԸ

Հուլիսի սկզբին «Ժողովուրդ» օրաթերթ, ArmLur.am լրատվականի ձեռքում էր հայտնվել տեսանյութ (https://armlur.am/1381707/), ըստ որի բովանդակության՝ մայիսի 24-ին Ջերմուկ քաղաքում՝ ճոպանուղու ներքեւի հատվածում գտնվող «Ստեյթ Հաուզ» ռեստորանում, միջադեպ էր եղել, որի կիզակետում էր հայտնվել Ջերմուկի գնդի հրամանատար Արման Մովսիսյանը:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դեպքին ընթացք էին տվել զինվորական քննչական վարչությունում, եւ «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ կար անգամ վարույթ նախաձեռնված:

Ավելին, մեր աղբյուրների պնդմամբ՝ մտավախություն կար, որ իրավապահները քննությունը օբյեկտիվ չեն իրականացնի:

Քննության ընթացքում մեղադրվում էին տուժողները, սակայն նյութի հրապարակումից հետո քննության ընթացքը փոխվել է. այն շարունակվում է եւ պարզվել է, որ նախաքննական մարմինը չէր տիրապետում տեղեկատվությանն այն մասին, որ դեպքերը նման զարգացում են ունեցել եւ նման տեսանյութ կա:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Wildberries–Ի ՏՀԱՃ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾՎԵՑ

Wildberries առեւտրային օնլայն հարթակը հերթական անգամ տհաճ անակնկալ էր մատուցել ցանցից օգտվողներին (https://armlur.am/1397327/):

«Ժողովուրդ» օրաթերթին, ArmLur.am-ին քաղաքացիները ահազանգել էին, որ զեղչված արժեքով ներկայացված ապրանքները բավականին մատչելի են վաճառվում, սակայն վճարումներ անելուց հետո՝ ապրանքը տեւական ժամանակ իրենց չի հասնում:

Ահազանգած քաղաքացու խոսքով՝ օգոստոսի 6-ից մինչ սեպտեմբեր իր գնած ապրանքն իրեն չէր հասել:

Նյութի հրապարակումից մեկ-երկու օր անց քաղաքացին զանգահարեց եւ տեղեկացրեց, որ ստացել է իր փաթեթը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԸՆԴԱՌԱՋԵԼՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Օգոստոս 15-ին «Ժողովուրդ» օրաթերթի, ArmLur.am-ի խմբագրությունը հերթական ահազանգն էր ստացել (https://armlur.am/1392702/): Այս անգամ ահազանգողները Արաբկիր վարչական շրջանի Օրբելի 67/2 հասցեում գտնվող 15 հարկանի նորակառույց շենքի բնակիչներն էին:

Բանն այն է, որ նորակառույց բազմաբնակարան շենքի տանիքին ապօրինի շինարարություններ էին տեղի ունենում:

Մեզ հետ զրույցում բնակիչները ասել էին, որ ոչ մի համաձայնություն չեն տվել կառուցապատողներին այդ շինարարությունները սկսելու համար, եւ, որ այն սկսվել է նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի օրոք:

Նյութի հրապարակումից հետո քաղաքապետարանը տուգանել է կառուցապատողին եւ ապամոնտաժել ապօրինի կառույցը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՄՇԱԿՈՒՅԹ

ՏՈՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Ի՞ՆՉ ՖԻԼՄԵՐ ԴԻՏԵԼ ԱՄԱՆՈՐԻՆ ԵՎ ՆԱԽՈՐԴՈՂ ՕՐԵՐԻՆ

Տարվա ավարտին մնացել է 6 օր եւ դա նշանակում է, որ շուտով Ամանոր է:

Ամանորը հետաքրքիր անցկացնելու շատ տարբերակներ կան, սակայն յուրաքանչյուր ոք այն անցկացնում է իր նախասիրություններին համապատասխան: Օրինակ շատերը գնում են քաղաքից դուրս, տեսարժան վայրեր, կազմակերպում են ամանորյա զբոսանքներ, քանի որ քաղաքի զարդարանքները ստեղծում են իրական հրաշքի զգացումը:

Եթե չգիտեք ինչպես անցկացնել Ամանորը, հանգստյան օրերը, ապա «Ժողովուրդ» օրաթերթը ամեն բան մտածել է:

Եթե պասիվ հանգստի սիրահար եք եւ տանից դուրս գալ չեք սիրում, ապա կարող եք հանգիստը տանն անցկացնել: Ամանորյա օրորին ամեն տարի հեռուստատեսությամբ ցուցադրվում են ֆիլմեր, որոնք, կարծես թե, ազդարարում են Ամանորի գալուստը:

Չնայած նրան, որ ցուցադրվող ֆիլմերի մի մասը չունեն Ամանորյա կոնտեքստ, դրանք, միեւնույն է, ցուցադրվում եւ հաճելիորեն դիտվում են Ամանորին կամ Ամանորին նախորդող օրերին:

Այսպիսով՝ առաջարկում ենք դիտել բոլորի կողմից սիրված ու նոստալգիկ «Մեր Բակը» ֆիլմը, որը պատմում է երեւանյան բակի կյանքի, իրական հարեւանության, սիրային հարաբերությունների մասին: Ֆիլմում նկարահանվել են անվանի եւ սիրված դերասաններ, ինչպիսիք են՝ Աշոտ Ղազարյանը, լուսահոգի Լալա Մնացականյանը, Հրանտ Թոխատյանը, Հայկ Մարությանը, Մկրտիչ Արզումանյանը եւ այլք: Ֆիլմը կարելի է դիտել նաեւ ընտանիքի հետ՝ այդպիսով երեկոն եւ մթնոլորտը դարձնելով նաեւ ընտանեկան:

Հաջորդ ֆիլմը, որը կարելի է դիտել Ամանորին, ռուսական, սովետական «Ирония судьбы, или с легким паром!» (Ճակատագրի հեգնանքը կամ բաղնիքդ անուշ) ֆիլմն է: Ֆիլմի գլխավոր հերոսներ Ժենյան եւ Նադյան իրար են հանդիպում Ամանորին զարմանալի զուգադիպությամբ: Մոսկվաբնակ Ժենյան, ըստ ավանդույթի, ընկերների հետ Ամանորի նախօրեին գնում է բաղնիք ու առաջին անգամ հարբած ու կիսաքուն Ժենյային Մոսկվա ճանապարհելու փոխարեն՝ ընկերները շփոթմամբ ուղարկում են Լենինգրադ, որտեղ նա տաքսիով Մոսկվայի իր բնակարանի հասցեով գնում է Լենինգրադի համանուն փողոցի նույն շենքի նույն բնակարան, իր մոտ եղած բանալիով բացելով դուռը՝ մտնում Նադյայի բնակարան եւ քնում այնտեղ: Նադյան, վերադառնալով, իր բնակարանում գտնում է անծանոթ քնած տղամարդու եւ այստեղից էլ սկսվում են ֆիլմի հիմնական իրադարձությունները: Ֆիլմն արկածային է: Այս ֆիլմը հատկապես կհիշեն ավագ եւ միջին սերնդի ներկայացուցիչները:

Ամանորին ցուցադրվում է նաեւ «Հարրի Փոթեր» ֆիլմաշարը: Թեպետ Ամանորի հետ կապը դիպվածային է այնտեղ, այնուամենայնիվ «Հարրի Փոթերի» մարաթոնը սիրված եւ սպասված է շատ շատերի կողմից: Եթե ցանկանում եք Ձեր երեկոները լցնել հրաշքներով, մոգությամբ, տարատեսակ կախարդանքներով եւ հմայախոսություններով, ապա միանշանակ պետք է դիտեք «Հարրի Փոթերի» բոլոր 7 մասերը:

Ֆիլմը Անգլիայում ապրող փոքրիկ տղայի՝ Հարրիի Փոթերի, կամ ինչպես նրան այլ կերպ կոչում են՝ «ողջ մնացած տղայի» մասին է, ում ծնողները եղել են հրաշագործներ, սակայն չար կախարդի պատճառով ժամանակից շուտ հեռացել են կյանքից, եւ այդպիսով Հարրին մնացել է մորաքրոջ ընտանիքի խնամակալության տակ: Մի օր, սակայն, Հարրիի կյանքը գլխիվայր է շրջվում, քանի որ հրաշարգործության եւ դյութագիտության դպրոցից՝ Հոգվարթսից, տղան ստանում է նամակ, որ ընդունված է այնտեղ, եւ պետք է սովորի մոգական դպրոցում, քանի որ նա եւս կախարդ է: Ահա այսպես էլ ամեն բան սկսվում է՝ մեկնարկ տալով արկածային ու կախարդական կյանքի, իրական ընկերության, սիրո, ձեքբերումների եւ կորուստների շարունակական շղթայի:

Ֆիլմաշարը եւս կարելի է դիտել տան անդամների հետ՝ հատկապես համեղ քաղցրավենիքով, տոնածառի լույսերը վառած՝ ապահովելու իրական կախարդական մթնոլորտ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՏԱՐՎԱ ԲԱՑԱՌԻԿԸ

ՀԱՐՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՎԵՑԻՆ

Դեկտեմբերի 24-ին «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն ահազանգ էր ստացվել, որ, հակառակ 2023 թ.-ին ՀՀ Կառավարության ընդունած 2291-Լ որոշման, որի համաձայն՝ Արցախից բռնի տեղահանված, առաջին կուրս ընդունված ուսանողների ուսման վարձերը վճարվում են Հայաստանի Հանրապետության կողմից, ՀՀ Ազգային ագրարային համալսարանի հետ կապված ծագել է խնդիր, որը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը կա՛մ չի ցանկանում լուծել, կա՛մ չի ընկալում խնդիրը:

4 ուսանող քոլեջից անմիջապես ընդունվել էին 2-րդ կուրս՝ կարծելով որ գումարը կփոխհատուցվի, սակայն կանգնել էին փաստի առջեւ:

Կապ հաստատեցինք ԿԳՄՍ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի հանրային կապերի եւ տեղեկատվության բաժնի պետ Աստղիկ Մելիք-Քարամյանի հետ, եւ նա զրույցում նշեց, որ եթե անցած տարի ուսանողը եղել է շահառու, այս տարի եւս պետք է շարունակի լինել շահառու, կախված ՄՈԳ-ից:

Արդյունքում, մեր հրապարակումից հետո, համալսարանից մոտեցել են մեզ դիմած քաղաքացուն եւ ասել, որ հարցին լուծում կտրվի:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ ԶՐԿՎԱԾ Է ՄԵՔԵՆԱ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ, ԲԱՅՑ ՎԱՐՈՒՄ Է

ArmLur.am-ը հունիսի 10-ին հոդված էր հրապարակել՝ «Մեքենա վարելու իրավունքից մեկ տարի զրկված Առուշ Առուշանյանը «000 oo 00» համարանիշի ավտոմեքենայով «վոյաժների» մեջ է» վերնագրով:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկության համաձայն՝ սույն թվականի մարտի 13-ին Պարեկային ծառայության՝ Երեւան քաղաքի գնդում օպերատիվ տեղեկություններ են ստացվել առ այն, որ «Մերսեդես Ջի 63» մակնիշի «000 oo 00» համարանիշի ավտոմեքենայի վարորդն այն վարել է ոչ սթափ վիճակում:

Մեքենայի ղեկին եղել է Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, ով զրկվել է ավտոմեքենա վարելու իրավունքից:

Ըստ հրապարակման՝ Առուշ Առուշանյանը, մեքենա վարելու իրավունքից զրկված լինելով հանդերձ, շարունակում է վարել նշված համարանիշով ավտոմեքենան: Հանձնաժողովը հրապարակման հիման վրա սույն թվականի հունիսին ուսումնասիրություն է նախաձեռնել՝ համայնքի ղեկավարի նկատմամբ կիրառելի վարքագծի կանոնների համատեքստում:

Ուսումնասիրությունը դեռեւս ընթացքի մեջ է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՅՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

Լոտ 1 - ք. Երեւան, Էրեբունի, Նոր Արեշի 46-րդ փողոց, 76/2 հասցեում գտնվող 264,2 քմ ավտոտեխսպասարկման կայան եւ 0,14847 հա հողամաս՝ վարձակալության իրավունքով (ժամկետը՝ մինչեւ 01.03.2025թ.): Լոտի մեկնարկային գինը՝ 66500000 ՀՀ դրամ:

Լոտ 2 - ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 212/1 հասցեում գտնվող 674,6 քմ ավտոտեխսպասարկման կետ եւ արհեստանոց եւ 0,03705 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 500000000 ՀՀ դրամ: Լոտ 3 - ք. Երեւան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա, 27 շենք, 2 հասցեում գտնվող 18,9

քմ ավտոտնակ: Լոտի մեկնարկային գինը՝ 8220000 ՀՀ դրամ: Լոտ 4 - վաճառքը՝ որպես մեկ միասնական համալիր՝ 209300000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

- ք. Երեւան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա, 27 շենք, 13 հասցեում գտնվող 142,5 քմ բնակարան: Մեկնարկային գինը՝ 89800000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա, 27 շենք, 12 հասցեում գտնվող 89,6 քմ բնակարան: Մեկնարկային գինը՝ 61200000 ՀՀ դրամ:

- ք.Երեւան, Արաբկիր, Վ. Փափազյան փողոց, 16բ շենք, 10 հասցեում գտնվող 93,75 քմ բնակարան: Մեկնարկային գինը՝ 58300000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 10.01.2025թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

● Դեկտեմբերի 30-ին՝ ժամը 13:00-ին, ԵԹԿՊԻ ուսումնական թատրոնում կցուցադրվի «Ամանորը Մադագասկարում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.500-3.000 դրամ:

Քնար Մանուկյան

Իմ շատ սիրելի Ձմեռ պապ ջան, ավելի ճիշտ՝ ամենակարող Աստված ջան, պահապան եղիր բոլոր մանուկներին, թող իմ հայրենիքի մանուկները մեծանան խաղաղ երկնքի տակ ու առողջ լինեն: Բարո՛վ գաս, 2025 թվական, բարի ու խաղաղ օրեր բերես բոլորիս ընտանիքներին ու արժանապատիվ ապրելու ձգտում: Իսկ իմ սիրելի հետեւորդներին ու իմ աշխատանքը գնահատողներին առանձնահատուկ շնորհակալություն: 2025-ին խոստանում եմ ավելի ուժեղ լինել:

Սոնա Գրիգորյան

Խաղաղությունը մեր կյանքի հիմքն է դարձել. թող 2025 թվականը լինի անվտանգ տարի մեր երկրի, մեր ընտանիքների, մեր զինվորների համար: Երբեք չմտածենք արտագաղթի մասին, թող որ ապրենք անվտանգ ՀՀ-ում: Երջանի՛կ տարի թող լինի:

Պետրոս Թովմասյան

Մեր հայրենիքին խաղաղություն, սահմաններին անվտանգություն, մեր ժողովրդին հույս ու հավատ, որ ամեն բան լավ է լինելու: Շնորհավո՛ր Նոր տարի:



Քրիստինա Մուշեղյան

Թող գալիք տարին ներքին խաղաղության եւ հանգստության տարի լինի, թող որ բոլոր մեր նվիրական երազանքներն իրականություն դառնան: Դե իսկ բոլոր ժամանակների ամենահերոս մեր զինվորներին՝ բարի ծառայություն եւ անփորձանք վերադարձ տուն: Շնորհավո՛ր Նոր տարի:

Էմմա Մարտիրոսյան

Թերեւս սամենակարեւորը, որի մասին մշտապես խոսում ենք, սակայն չունենք, խաղաղությունն է: Չնայած 2024-ի զիջումներին եւ անկումներին՝ ցանկանում եմ, որ 2025 թվականին տոնենք մեր հաղթանակները, ինչը կլինի առանց արյան եւ արցունքի: Շնորհավո՛ր 2025:

Էմմա Միքայելյան

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ, հայ մարդ: Թող օձի տարում Հայաստանի գլխին կուտակված սեւ ամպերը ցրվեն: Ցանկանում եմ, որ ձեր սրտում ունենաք հայրենիքը, սիրեք այն ինչպես ձեր սիրելիին, հարգեք ինչպես ձեր ծնողին, փայփայեք ինչպես ձեր երեխային:

Հովսեփ Հովսեփյան

Թող գալիք տարվա յուրաքանչյուր նոր պահ երջանկություն, հաջողություն, հարմարավետություն եւ ջերմություն բերի ձեր տուն: Թող յուրաքանչյուր իրադարձություն լցված լինի ուրախ պահերով, աչքերում փայլով, սիրելիների ժպիտներով:

Հուրի Բաղդասարյան

Սիրեք իրար, շատ սիրեք, որպեսզի ապրեք:

Ավարտվեց 2024-ը՝ լի փորձություններով, հույզերով, ցավոք նաեւ ազգային կորուստներով: Վստահ եմ, որ 2025-ը զերծ չի լինի փորձություններից, սակայն փորձությունները առ ոչինչ են, երբ կա սեր ու միասնություն: Ցանկանում եմ, որ 2025 թվականը լինի ոչ թե պարզապես խաղաղության, այլ հաղթանակի ու հաղթական խաղաղության տարի:

Աննա Սրապիոնյան

Ուզում եմ՝ եկող տարում թանկ մարդկանց չկորցնենք, սիրով ու խնամքով վերաբերվենք նրանց, ում սիրում ենք: Հաղթանակածի հոգեբանությունն ու կարգավիճակն էլ ուղեկից լինի ամբողջ 2025 թվականի ընթացքում: Ուրախ Ամանոր եւ Սուրբ Ծնունդ ամենքին:

Ալվարդ Կոշկակարյան

Շուտով 2025 թվականն է, այն իր հետ կբերի այն ամենը, ինչը վերցնելու պատրաստակամություն կունենանք. ուրեմն թող 2025-ը լինի հաջողությունների, հոգեւոր Հայաստանի ճիշտ ընկալման եւ լավատես լինելու ուժը չկորցնելու տարի: Շնորհավո՛ր Ամանոր:

Մարիամ Թեյմուրազյան

Մաղթում եմ, որ եկող՝ 2025 թվականը հայերիս համար ձեռքբերումների եւ ապագայի նկատմամբ վստահություն ներշնչող տարի լինի: Թող այս Ամանորը լինի ուրախ եւ հրաշքներով լի... Շնորհավո՛ր Նոր տարի:

Ալվարդ Բաղդասարյան

Թող այս Նոր տարում բոլորի սրտերը լցվեն ջերմությամբ, բարությամբ, ներդաշնակությամբ եւ որ ամենակարեւորն է՝ հավատով:

Թող 2025 թվականը դառնա խաղաղության եւ սիրո տարի թե՛ մեր տներում, թե՛ մեր երկրում, թե՛ աշխարհում: Թող բոլոր տարաձայնությունները մնան անցյալում, իսկ մեր ապագան կառուցվի փոխադարձ հարգանքի, սիրո եւ միասնության հիմքի վրա: Շնորհավո՛ր Ամանոր:

Ոսկան Սարգսյան

Մաղթում եմ, որ 2025 թվականին Հայաստանում լինի հայասեր, հայրենասեր իշխանություն, հաստատվի արդար, հարատեւ խաղաղություն, առողջություն: Թող հաջողությունների, երջանկության տարի լինի:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 24.12.2024
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*